ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 165-Ա

19 սեպտեմբերի 2025 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԵՎԻԿԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 254-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Արևիկ բնակավայրի մի խումբ բնակիչների 2025 թվականի օգոստոսի 20-ի դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Արևիկ բնակավայրի վարչական ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 26-ի գրությամբ ներկայացված հանրային լսման արձանագրությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Արևիկի երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը անվանափոխել՝ դարձնելով «Արևիկի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն և անվանակոչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Արևիկ բնակավայրի բնակիչ, նույն դպրոցի նախկին սան, 44-օրյա պատերազմում զոհված, կրտսեր սերժանտ Արամ Սեյրանի Սիմոնյանի անունով, անվանելով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Արևիկի Արամ Սիմոնյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Արևիկի Արամ Սիմոնյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային

կազմակերպության կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների 2025 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 254-Ա որոշման թիվ 23 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 23 հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -21 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԶԱՎԵՆ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԱԹՈՍՅԱՆ ՄԱՐՏԻԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՇԱՄԻՐԱՄ

ԱՐՇԱԿՅԱՆ ՎԱՍՅԱ

ՇԱՀԲԱԶՅԱՆ ՍԱՀԱԿԱՆՈՒՇ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ՄՆԱՑՅԱՆ ՄՀԵՐ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԻԳԻԹՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՔՈՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՆԻ

ՉԱԼՈՅԱՆ ԱՐԻՍՏԱԿԵՍ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱԶՆԻՎ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԻԼՎԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ԹՈՐԳՈՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2025 թվականի սեպտեմբերի 19
գյուղ Ախուրյան

Հավելված 23
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու
2025 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 165-Ա որոշման

Հավելված 23
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու
2024 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 254-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԵՎԻԿԻ ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 11

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Սահմանված դրույքը	Սահմանված դրույքի միավորը	Պաշտոնային դրույքաչափերի չափը /դրամ/	ամսական աշխատավարձի գումարը	Տարեկան աշխատավարձի գումարը
1	Տնօրեն	1	1	1	170000	170000	2040000
2	Հաշվապահ	1	1	1	110000	110000	1320000
3	Մանկավարժներ	8		7.25	110000	797500	9570000
4	Հավաքարար	1	0.5	0.5	105000	52500	630000
5	***ԸՆԴԱՄԵՆԸ***	***11***		***9.75***		***1130000***	***13560000***

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ավագանու
2025 թվականի սեպտեմբերի
19-ի թիվ 165 -Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԵՎԻԿԻ ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Արևիկի Արամ Սիմոնյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Հաստատություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արևիկի երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը: Այն համարվում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հաստատություն:

2. Հաստատության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման պետական գրանցման) պահից:

3. Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացնող այլ միջոցներ:

4. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

5. Հաստատությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

Հաստատությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

6.Համայնքը պատասխանատվություն չի կրում Հաստատության պարտավորությունների համար: Հաստատությունն իր հերթին պատասխանատվություն չի կրում համայնքի պարտավորությունների համար:

7. Հաստատության անվանումն է՝

1) Հայերեն լրիվ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԵՎԻԿԻ ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ:

2) Հայերեն կրճատ՝ ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԵՎԻԿԻ ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ:

3) Ռուսերեն լրիվ ОБЩИННАЯ НЕКОМЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ «АРЕВИКСКАЯ ШКОЛА ИСКУССТВ ИМЕНА АРАМА СИМОНЯНА» ОБШИНЫ АХУРЯН ШИРАКСКИЙ МАРЗ РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

4) Ռուսերեն կրճատ՝ ОНО « АРЕВИКСКАЯ ШКОЛА ИСКУССТВ ИМЕНА АРАМА СИМОНЯНА» ОБШИНЫ АХУРЯН ШИРАКСКИЙ МАРЗ :

5) Անգլերեն լրիվ՝ COMMUNITY NON-COMMERCIAL ORGANIZATION «ART SCHOOL OF AREVIK AFTER ARAM SIMONYAN» OF AKHURYAN COMMUNITY OF SHIRAK MARZ REPUBLIC OF ARMENIA

6) Անգլերեն կրճատ՝ CNCO « ART SCHOOL OF AREVIK AFTER ARAM SIMONYAN» OF AKHURYAN COMMUNITY OF SHIRAK MARZ OF RA

8. Հաստատության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ 2607

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, Արևիկ բնակավայր, 8-րդ փողոց, 24-րդ շենք:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

9. Հաստատությանն ստեղծվել է երաժշտության և արվեստի մյուս բնագավառներում ուսումնական գործունեություն իրականացնելու նպատակով:

10. Իր առջև դրված խնդիրների արդյունավետ իրականացման համար հաստատությունը՝

1) համագործակցում է արտասահմանյան երկրների առաջատար կրթական կազմակերպությունների և կրթական ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների հետ,

2) իր կողմից կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի հիման վրա իրականացնում է երկկողմանի ու բազմակողմանի կապեր Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների, հիմնարկների, այլ կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ,

3) կատարում է տարատեսակ աշխատանքներ կադրերի պատրաստման, մասնագետների փոխանակման և այլ բնագավառներում:

11. Հաստատությունը կարող է իրականացնել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված գործունեության տեսակներ:

ԳԼՈՒԽ 3

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. Պետական գրանցման պահից Հաստատությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

Հաստատությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտակությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գուքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

13. Հաստատությունն իրավունք ունի ստեղծել (հիմնադրի որոշմամբ) առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, դասարաններ և ներկայացուցչություններ):

Կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Հաստատությունը կարող է ստեղծել ստորաբաժանումներ, հիմնարկներ:

Հաստատության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Հաստատության կանոնադրության հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Հաստատության լիազորագրերի հիման վրա:

14. Հաստատությունն իրավունք ունի.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևերով ձեռք բերել գույք, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք:

2) ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ,

3) հիմնադրի որոշումների կամ սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը,

4) օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

15. Հաստատությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

16. Հաստատությունը պարտավոր է՝

1) օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում և ներկայացնել վիճակագրական հաշվետվություն,

2) աշխատանքային պայմանագրեր կնքել Հաստատության աշխատակիցների հետ,

3) պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից պատճառած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ հարկ եղածին պես չկատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,

4) հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը,

5)ապահովել Հաստատության փաստաթղթերի՝ (Հաստատության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Հաստատության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների լիազորագրերի, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, տնօրենի հրամանների, հրահանգների ու կարգադրությունների, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը,

7) կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

ԳԼՈՒԽ 4

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

17. Հաստատության աշակերտների համակազմի համալրման կարգը և դասարանների առավելագույն խտությունը, ինչպես նաև ուսուցման ժամկետները և բովանդակությունը սահմանվում են պետական կրթական չափորոշիչներով:

18. Հաստատությունում կարող են գործել հետևյալ բաժինները.

1) դաշնամուրային
2) լարային
3) փողային
4) ժող. նվագարանների
5) պարարվեստի
6) կերպարվեստի
7) կիրառական արվեստի

Բոլոր բաժիններում պարտադիր դասավանդվում են տեսական առարկաներ:

19. Նոր բաժիններ դպրոցում բացվում են ըստ անհրաժեշտության, մանկավարժների և այլ անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում:

20. Սովորողների առաջադիմության վերահսկման ձևերը որոշվում են ուսումնական ծրագրերով:

21. Հաստատությունում սովորողների համար սահմանել յոթամյա և հնգամյա կրթության ժամանակահատվածներ:

Յոթնամյա ուսման տևողություն սահմանել հետևյալ մասնագիտությունների համար.

1) դաշնամուրային
2) լարային

հնգամյա ուսման տևողություն սահմանել.

1) փողային
2) ժող. նվագարաններ

22. Հաստատությունում ցածր դասարաններ են համարվում 7-ամյա տևողության դեպքում՝ 1-4 դասարանները ներառյալ: 5-ամյա տևողության դեպքում՝ 1-3 դասարանները ներառյալ:

23. Հաստատության առաջին դասարան ընդունելություն կազմակերպելու համար հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի նախագահ է հանդիսանում հաստատության տնօրենը կամ փոխտնօրենը:

24. Հաստատության առաջին դասարան կարող են ընդունվել 6-9, 9-12, 7-11 տարեկան երեխաները: Առանձին դեպքերում ընդունող հանձնաժողովը իրավասու է կատարելու անհրաժեշտ ընդունելություն առանց տարիքային սահմանափակման:

25. Հրամանագրված ցուցակը համարվում է վերջնական, ունի իրավաբանական ուժ, վերադաս մարմնի կողմից ենթակա չէ փոփոխման, եթե ընդունելությունը կատարված է հաստատությանը հատկացված տեղերի համաձայն:

26. Ընդունելությունները սկսվում են հունիսի 1-ից և ավարտվում մինչև սեպտեմբերի 1-ը:

Առանձին դեպքերում դիմումների ընդունման ժամկետները կարող են տեղափոխվել ելնելով տեղական առանձնահատկություններից և սոցիալ տնտեսական պայմաններից՝ համաձայնեցնելով Օրենքով նախատեսված համապատասխան մարմինների հետ:

27. Հաստատության աշակերտների համար ուսումնական տարին սկսվում է ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ին և ավարտվում հաջորդ տարվա մայիսի 31-ին:

28. Մանկավարժական կազմի համար աշխատանքային ժամանակահատված համարվում է ընթացիկ տարվա օգոստոսի 26-ից մինչև հաջորդ տարվա հունիսի 30-ը:

29. Հաստատության սովորողներին աշնանային, ձմեռային և գարնանային արձակուրդները հատկացվում են հանրապետության կրթական համակարգում գործող հանրակրթական հաստատությունների համար սահմանված ժամանակահատվածներում:

30. Ուսումնական աշխատանքները Հաստատությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարության) կողմից հաստատված ուսումնական ծրագրերի դասաժամերի համաձայն:

31. Ուսման ժամանակահատվածում արգելվում է սովորողներին ընդգրկել ուսումնական գործընթացի հետ չառնչվող տարբեր տեսակի աշխատանքների և միջոցառումների մեջ:

32. Հաստատության ամենօրյա և կիսամյակային գործընթացն իրականացվում է տնօրենի կողմից հաստատված դասացուցակով:

33. Դասի տևողությունը սահմանվում է համաձայն Նախարարության կողմից հաստատված օրինակելի ուսումնական պլանի:

Սովորողների առաջադիմությունը գնահատվում է 10 միավորային համակարգով:

1-2 անբավարար
3-4-5 բավարար
6-7-8 լավ
9 -10 գերազանց

34. Ուսումնական տարին բաժանվում է երկու կիսամյակի.

1-ին կիսամյակ (սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 25-ը)

2-րդ կիսամյակ (տոների ավարտից հետո առաջին աշխատանքային օրվանից մինչև մայիսի 31-ը)

35. Ստուգարքները, փոխադրական և ավարտական քննությունները անցկացվում են ըստ անհրաժեշտության, մայիսի 20-ից մինչև հունիսի 30-ը:

36. Աշակերտներին վերաստուգարք կամ վերաքննություն նշանակվում է հիվանդության պատճառով կամ անբավարար գնահատական ստանալու դեպքում: Վերաստուգարքների, վերաքննությունների համար նշանակվում է ժամկետ մինչև նոր ուսումնական տարվա սեպտեմբերի 20-ը:

37. Հիվանդության կամ այլ հարգելի պատճառներով ուսումնական ծրագրերը չանցած սովորողները կարող են մնալ նույն դասարանում մանավարժական խորհրդի որոշման և տնօրենի հրամանի համաձայն:

38. Սովորողներին բարձր դասարան կամ կազմակերպության ներսում բաժնից բաժին տեղափոխումը, կազմակերպությունից հեռացնելը կամ նրանց նկատմամբ տույժ կիրառելը կատարվում է մանկավարժական խորհրդի որոշման հիման վրա:

39. Հաստատությունում աշակերտների վարքը չի գնահատվում:

40. Սովորողը բնութագիր կարող է ստանալ ավարտական դասարանում կամ հաստատությունից հաստատություն տեղափոխվելու դեպքում:

41. Հաստատության շրջանավարտները, ավարտական քննությունները համապատասխան ծրագրերով հանձնելու դեպքում, ստանում են ավարտական վկայականներ: Գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտները ստանում են «գերազանցության վկայական, իսկ հարվածային առաջադիմություն ունեցողները՝ «շնորհակալական» թերթիկներ:

42. Հիվանդության կամ այլ հարգելի պատճառներով ավարտական քննություններին չմասնակցելու դեպքում վերջին երկու տարվա առաջադիմության ամփոփիչ գնահատականների ցուցանիշներով, շրջանավարտները կարող են ստանալ ավարտական վկայականներ:

ԳԼՈՒԽ 5

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

43. Հաստատության կրթական գործընթացի մասնակիցները աշակերտներն են, մանկավարժական աշխատողները և ծնողները (օրինական ներկայացուցիչները),:

44. Աշակերտների ընդունելության ժամանակ Հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերին, որոնք կանոնակարգում են Հաստատության գործունությունը:

45. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն Նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական, մանկավարժական որակավորում:

46. Հաստատության աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության

օրենսդրությանը համապատասխան, Հաստատության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

47. Հաստատության աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու Հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

ԳԼՈՒԽ 6

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

48. Հաստատության գործունեությունը իրականացնելու համար հիմնադիրը հաստատությանը օգտագործման իրավունքով հատկացնում է գույք, որը հիմնադիրի սեփականությունն է:

49. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

50. Հաստատությունն իրավունք ունի Օրենքին, հիմնադրի որոշումներին և / կամ/ իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

51. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ, բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

52. Հաստատության սեփականության, ինչպես նաև օգտագործման իրավունքով իրեն հատկացված գույքի պահպանման հոգսը կրում է Հաստատությունը:

53. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում միայն դատական կարգով:

54. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

55. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու և օգտագործման հանձնելու: Հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ, ավագանու որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարուց ավել՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված

դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են: Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

56. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

57. Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից, ինչպես նաև ուսուցման համար գանձվող վճարներից:

58. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝ ա) հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները բ) բարեգործական , նպատակային ներդրումները, ծնողական վճարումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները գ)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

59. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի /վերստուգման/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 7

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

60. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած մարմինը (համայնքի ղեկավարը), գործադիր մարմինը (տնօրենը):

61. Հաստատության հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

62. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) Հաստատության հիմնադրումը.

2) Հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) Հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

4) Հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը.

5) Հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

6) Հաստատության կազմակերպումը և լուծարումը.

7) Հաստատության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

8) Օրենքով և Հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

63. Լիազորված մարմինն իրականացնում է Հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ անպատշաճ իրականացման համար:

64. Լիազորված մարմինը՝

1) Հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

2) իրականացնում է Հաստատության գործունեության վերահսկողությունը.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Հաստատության գործադիր մարմնի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) լսում է Հաստատության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները.

5) վերահսկողություն է իրականացնում Հաստատությանն ամրացված համայնքային սեփականության գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

6) վերահսկողություն է իրականացնում Հաստատության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ Օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

7) հաստատում է Հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, եթե Հաստատությունը չունի կոլեգիալ կառավարման մարմին (Խորհուրդ):

8) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

65. Հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը (տնօրենը), որին նշանակում և ազատում է (նրա լիազորությունները դադարում են) լիազորված մարմինը (համայնքի ղեկավարը), եթե հիմնադրի որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

Գործադիր մարմնի պաշտոնում կարող է նշանակվել բարձրագույն կրթություն ունեցող՝ Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Գործադիր մարմնի պաշտոնում նշանակվում են մրցույթով:

66. Հաստատության գործադիր մարմինը օրենքով, հիմնադրի և լիազորված մարմնի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Հաստատության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ լիազորված մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

67. Հաստատության գործադիր մարմնի գործառույթներն իրականացնող անձի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված մարմնի ղեկավարը: Պայմանագրում սահմանվում են նրա իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված մարմնի, Հաստատության կառավարման այլ մարմինների հետ նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման՝ օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը անհրաժեշտ կգտնեն: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

68. Հաստատության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

69. Հաստատության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Հաստատության և (կամ) համայնքին պատճառված վնասի համար: Հաստատության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

Հաստատության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցնող անձը պարտավոր է օրենքով սահմանված կարգով լուծել նաև նրա կողմից Հաստատությանը կամ համայնքին պատճառված վնասի փոխհատուցման հարցը: Սույն պահանջը չկատարելու հետևանքով Հաստատությանը կամ համայնքին պատճառված վնասի համար Հաստատության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցրած պաշտոնատար անձը կրում է լրիվ գույքային պատասխանատվություն:

70. Հաստատության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել հիմնադրի, լիազորված մարմնի, կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինների՝ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

71. Հաստատության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի բացակայության դեպքում նրան նշանակած մարմնի գրավոր որոշման համաձայն այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:

72. Հաստատության գործադիր մարմինը (տնօրենը)՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս Հաստատության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) տալիս է Հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով.

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Հաստատության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) բանկում կամ գանձապետարանում բացում է հաշիվներ.

6) կատարում է աշխատանքի բաշխում համապատասխան աշխատողների միջև.

7) սահմանում է Հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը.

8) հաստատում է Հաստատության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները, եթե սույն լիազորությունը վերապահված չէ կոլեգիալ կառավարման մարմնին.

9) նշանակում է Հաստատության հիմնարկների, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարներին, նրանց տալիս է համապատասխան լիազորագրեր, եթե սույն լիազորությունը վերապահված չէ կոլեգիալ կառավարման մարմնին:

10) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

11) իրականացնում է օրենսդրությանը չհակասող և Հաստատության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

73. Հաստատության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են՝

հիմնադիրը, լիազորված մարմինը, հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

Հաստատությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

74. Հաստատության տարեկան ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերստուգելու համար հիմնադիրն իրավունք ունի ամեն տարի ներգրավել Հաստատության, Հաստատության տնօրենի հետ գույքային շահերով չկապված արհեստավարժ վերստուգիչի՝ աուդիտորի (արտաքին աուդիտ):

ԳԼՈՒԽ 8

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

75. Հաստատությունը, նրա Հիմնադրի որոշմամբ, կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

76. Հաստատությունը կարող է դատական կարգով վերակազմակերպվել կամ լուծարվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Եթե լուծարվող Հաստատության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

77.Հաստատությունն իրավունք ունի վերակազմավորվել հարյուր տոկոս համայնքային մասնակցությամբ ընկերության:

78. Հաստատության լուծարման դեպքում Հաստատության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի հաշվեկշիռ:

79.Հաստատությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը դադարած՝ այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու պահից: